

ջեց ստուերական հին զոհերը, անոնց տեղ դնելով ս. սեղանոյն անարիւն զոհը. եւ թէ քրիստոնէական եկեղեցին սկսեալ իւր խանձարըէն՝ հրաժարեցաւ անոցմէ (Եբր. Ժ եւն): Ագապի այդ յեղաշրջութիւնը մեր հարց քով՝ լոկ արտաքին կամ պատահական բան մը չէ. այլ զոհի խոր դրոշմն է՝ որ կը կայանայ մատաղին թէ ձեւին եւ թէ գաղափարին մէջ:

1. Չեւի կողմանէ հետեւեալ ծանր ազաւազմունքը կը կրէ: Համարձակօրէն կը մկրտուի՝ ոչ միայն հրէական պատարագ անուամբ, որ դեռ տանելի է, այլ եւ ողջակեզ եւ զոհ կոչումներով (աստ, 312, '52), որոց բնիկ իմաստը շատ յայտնի է եւ անկարօտ մեկնութեան: ժամանակ մ'որձ են հայ մատաղի անասունք, ինչպէս յաճախ արու էին հրէականք ու հեթանոսականք ալ (325-6): Իսրայէլ իւր զոհերը կը ձօնէր Եհովայի տաճարին մէջ, կը հանէր սեղանին վրայ, ու Ղեւտացւոց ձեռքով. Հայն ալ իւր մատաղը տնէն հեռացուցած՝ կը մատուցանէր եկեղեցւոյ գաւթին մէջ, կը դնէր ս. սեղանին վրայ, եւ իւր քահանայից ձեռքով (320, '42, '49, '73): Աղ կը կերցնէ սա անասնոյն, եւ անոր վրայ անոյշ իւղ կը ցանէ, ինչպէս Եբրայեցին կ'ընէր իւր պատարագաց (330, '34, '47,